Ավետիք Իսահակյան

Անի

Այստեղ երկնել են նախնիները իմ,
Դարձել է այստեղ նյութը գաղափար,
Հագել է այստեղ երազը մարմին,
Չքնաղ երազը, որ չունի կոպար:

Անի՛, դու չես լոկ հողեղեն մի գանձ,
Դու՛, ինքդ ես ոգին – մի ողջ ժողովուրդ,
Ամեն ձև այստեղ ոճ է գերազանց,
Ամեն ինչ այստեղ – իմաստ ու խորհուրդ:

Ես հոգուս աչքով՝ անցած ու ներկա
Վիճակդ եմ տեսնում՝ հենված մի սյունի,
Որ մարտնչելով դարեր ոտընկա,
Մեռնում է կանգնած, եթե մահ ունի:

Սաղավարտակիր, ձեռքիս տեգ ու նետ,
Կանգնել եմ բարձր բուրգիդ կատարին,
Ոստանիկներիդ, ռազմիկներիդ հետ
Լսում ենք վառված սեգ զորավարին:

Տափաստաններից, խուժանը վայրագ
Հորդել է, եկել – հեղեղ զայրագին,
Ուզում է, Անի՛, ընկճել լուծի տակ
Քո ստեղծագործ, թևավոր ոգին:

Խաժամուժ, խուժան՝ անծայր, անքանակ,
Դարեր խուժում են – խժդուժ, խոլարշավ,
Ճրչում խժաձայն, դնում են բանակ
Քո ցորենաշատ դաշտերում անբավ:

Եվ որոտում է շեփորը ռազմի,
Կռվում ենք մտած արյուն ու քրտինք,
Դարեր կռվում ենք ատամ ատամի,
Մեռնում ենք կանգնած, եթե մահ ունինք…

Քո հին թշնամին, Անի՛, չե՞ ս տեսնում,
Խուժել է նորից քո դաշտերի մեջ,
Բայց վառվում է դեռ մեր ակութներում
Հինավուրց ուխտի կրակը անշեջ:

Դու՛, հին դրոշակ, դու՛, բագին փառքի,
Հենվել եմ նորից քո անմահ սյունին.
Եվ սպասում եմ, և դարեր ոտքի
Քո իրավաբեր շեփորիդ ձայնին…

1926
Վենետիկ